

ԻՐԱՅԻՆ ՍՉԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇՈՒԲՈՒ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պաշտոնային համար Տարեկան 12 ֆր.
» » Վեցամսեայ 6 ֆր.
Առանձնական համար (երկու քիւր ձեկ ծրարով) Տարեկան 14, վեցամսեայ 7 ֆր.
ԿԱՆՈՒԻ ՎՃԱՐՆԵԼԻ

Համակ դրամ եռայն դրկել հետեւեալ հասցեով

ԽՐԱՅԻՆ ՍՉԳԱՅԻՆ «ԻՐԱՅԻՆ» ԼՐԱՏՐԱԿ — Վ.Ս.Ռ.Ն.Ա. (Պաշտոնային)
Редакция на вѣст.
„Иравункъ“
ВАРНА (България).
Rédaction du journal
„Iravounk“
VARNA (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք
էս չեն ընկալիր եւ յարմար դատարան
ներքէ միայն կը հրատարակուին ամ-
բողոքով կամ մասնաւոր:
Խմբագրութեան տղր 20 սանթիմ. երե-
քն աւելի անգամներու համար 20 օ/օ
գնել կը լինի:

ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Եւրոպական տէրութեանց մե-
ծագոյն մասին սահմանադրական
կազմութիւնը՝ որ ըստ ինքեան
շատ լաւ գործիւն մըն է, գէշի
ազատութիւն ձգտող եւ եւրոպա-
կան սովորութիւնները կապելու ու-
զող ամեն ժողովուրդէ կընդօրի-
նակուի: Մանաւանդ թրքական
լուծէն նոր ազատած ամեն ազգ իր
հասարակութեան ահագին մեծա-
մասնութեան վերջին աստիճանի
տգիտութիւնը առանց նկատի առ-
նելու ինքզինքը սահմանադրական
կառավարութիւն հռչակեց, ժողո-
վուրդը պահ մը կարծեց թէ ալ
ինքն է երկրին հրամայողը, տէրը
և վերջապէս բոլոր պաշտօնեաները
ընտրողը ու հրահանգողը: Իրօք
ալ, թուրքի վրայ գծուած օրէնք-
ներէն, առեւտրային ձեւակերպու-
թիւններէն դատելով այդպէս կը
կարծէ մարդ. բայց մօտէն և զննա-
կանօրէն ուսումնասիրելով կը տես-
նենք թէ այդ կարծիքն ահագին
սխալ մը կը պարունակէ. այդ
առեւտրային ձեւակերպութիւն-
ները միայն կեղծել կը զարգա-
րեն այն վարչական կամ կառա-
վարական գունդին, որուն մէջ մի-
ապետական ինքնասէր ոգին, փա-
ռասիրութիւն և շահամուտութիւն,
խաբեարայութիւն ու զրկանք, կեղ-
ծաւորութիւն ու մեքենայութիւն-
ներ կը վիտան, ի վնաս հասարա-
կութեան, ի վնաս տկարին ու աղ-
քատին:

Բայց դժբախտաբար հասարակ
ժողովուրդը զրկելէ բոլորովին ան-
զիտակ իր երկրի կեդրոնի մէջ
անցած դարձածներուն, ստիպուած
է իրմէ պահանջուած ծանր ծանր
տուրքերը վճարել, միայն սա մը-
խիթարութիւնը ունենալով որ
ընտրութեանց ատեն ինքն ալ իր
քուէն ունի տալու. բայց որով
պիտի տայ իր այդ ձայնը որուն
միակ աէրը ինքն է: Խեղճը իր այդ
իրաւունքը օգտակարապէս գոր-
ծածել չը գիտեր. ընտրութեանց
միջոցին կառավարութեան զուլի
գտնուող պաշտօնեաները ստէպ կը
յաշնողին այլ եւ այլ ստոր միջոց-

ներով ու գործուածներով իրել
այդ քուէն ինքուստ իրենց: Այս
պարագան կապացուցուի ամեն
երկրի մէջ կառավարուած բոլոր ընտ-
րութիւններով, որոնց արդիւնքը
միշտ եղած է կառավարութեան
զուլի գտնուող կառակցութեան ան-
պատճառ բացարձակ մեծամասնու-
թիւն շահին: Այս, միշտ երկ-
րին վիճակներն ընտրած առժա-
մանակեայ նախարարութիւնն է
որ ժողովուրդեան քուէներու ա-
հագին մեծամասնութիւնը կը
շահի, իր կուսակիցները երեսփո-
խան ընտրել կուտայ, որով միլիոնա-
ւոր ժողովուրդին վրայ իշխելու
համար տեսակ մը ընկերային
կը կազմակերպէ:

Ալ անկէ անդին երկար տարի-
ներ ժողովուրդին ղեկը այդ նա-
խարարութեան ձեռքին մէջն է,
ուղած տղը կը քաշէ ու կը տա-
նի, կը մտնայ ընտրութիւններէ ա-
ռաջ հրապարակաւ իր ըրած հա-
ղար ումէ կոստումները: Ժողո-
վուրդը կը բռնաւորէ նորանոր
ծախքերով, տուրքերով և չարա-
չար կը կեղծէ. և այս ամենը
կըլլայ իրեն թէ ժողովուրդին
կամ ազգին ազատ կամքով ընտ-
րուած երեսփոխաններու հաւանու-
թեամբ, սահմանադրական օրէնքով
և այլն: Մինչդեռ ներքնապէս և
իսկապէս ժողովուրդը գրեթէ բնա-
զիր ունեցած չէ, այլ սա պարզ
գործիք մը եղած է երկրին վի-
հապետին գործի գուլիս կոչած մի-
ջանի կուսակցապետներու, որոնք
ինչպէս վերը ըսինք, իրենց ար-
բանակներով ամեն միջոցներու
գիծած են զիրենք և իրենց անձ-
նուէրները ընտրել տալու: Իսկ
այս վերջինները հանրութեան շա-
հէն շատ աւելի իրենց ևսին ու
շահին գոհացում տալու նպատա-
կաւ, այսինքն բարձր պաշտօնեան
խելու տենչով ամեն ճիգ ի գործ
դրած են ու կը գնեն իրենց քա-
ղաքներուն մէջ սրպէս զի իրենց
կուսակցութիւնը շահի: Աւելորդ
է հոս երկար բացատրել ընտրու-
թեանց ատեն ի յայտ եկած շատ
մը ծիծաղաշարժ և միանգամայն
ցաւալի տեսարանները:

Երկրին վիճակներէն գործիքը-

լուի կոչուած նախարարութեան
առաջին գործը կըլլայ ընտրու-
թեանց մէջ իր դիրքը ապահոված
ըլլալու համար քաղաքներու ու
աւաններու բոլոր պաշտօնեաները
վճարել, ասանք ըլլան պարկեշտ
կամ անպարկեշտ, ըլլան ուղղամիտ
կամ կոշտաւերանիւրանիւր կարտաքս
ուրիշ պաշտօնէ, միայն սա պարզ պատ-
ճառաւ որ անոնք նոր նախարարնե-
րու կուսակցութեանը չին պատ-
կանած: Ահա այսպէս մէկ կողմէ
կը տեսնես մեղաւորի հետ անմեղն
ալ վիզը ծած և պաշտօնէն ու-
հացէն զրկուած, իսկ միւս կողմ
պարկեշտին հետ անպարկեշտ ալ
գործի գուլիս անցած, որ ժողո-
վուրդին ուսին վրայ կուգայ նըս-
տիլ և անոր հիւսիք ծծել իրեն ա-
նթիւնցած փորը կշտացնելու և եթ
նպատակաւ. այլեւս կը ծծէ նա
ոչ թէ միայն իր ներկային ունե-
ցած պէտքերը գոհացնելու չափ,
այլ իր ապագայ պէտքերուն հա-
մար ալ շտեմարանելու անյադ և
ճիւղալի տենչով մը, քուանց
խտրութիւն դնելու աղնիւ ու ան-
աղնիւ միջոցներու մէջ. և նա իր
խիղճը կը հանգարտեցնէ սա մը-
տածումով, «Ինչ ընեմ, քանի որ
յայտնի է թէ ներկայ նախարա-
րութիւնը քանի մը տարի վերջ
կամ նոյն իսկ քանի մը ամիս յի-
տոյ պաշտօնէ կրնայ և նոր գա-
լիքները անպատճառ զիս պաշտօ-
նանկ կըլնեն, ոչով անգործութեան
կը դատապարտուիմ ու շահէ կը
զրկուիմ. ուստի պարտաւորեալ
եմ ներկայ տակիցէն օգտուելով
ամեն միջոցի գիմել ու ապագայիս
բարեբաւ համար շտեմարանել»:

Ահա այս կործանարար գրու-
թիւնը պատճառ կըլլայ որ շատ պար-
կեշտ պաշտօնեաներ անբարոյա-
կան ըլլան: Խեղճին ապագան
տեստայդ է և դիրքը խախտու-
ինք որչափ որ խիղճով ու ուղղա-
մտութեամբ գործած ըլլայ, նա-
խարարական փոփոխութիւն մը ա-
մեն մէկ ջրով պիտի լուայ: Իսկ
ապագայ ապրուստի անհրաժեշտ
պէտքը ճիւղալի մը նման իր գի-
մացը կանգնած կը պահանջէ իր-
մէ վերացական մտածումները ձը-

գել ու ամեն գնով իր պէտքը
գոհացնել ու ապագան փրկել:

Եւ այս ամենը կը կատարուի
փոքր ազգաց մէջ յանուն օտեմա-
նադրութեան, յանուն ժողովուրդի
իրաւանց, որ աւագ, անուանական
է միայն, երբ ժողովուրդը չունի
պէտք եղած դարգացումը որով
սահմանադրութեան իրեն առած
իրաւունքները իւր օգտին համար
գործածել գիտնայ: Ահա ժողո-
վուրդի ահագին մեծամասնութեան
զարգացած չըլլալուն պատճառա-
օրէնքը անիրաւութեանց գործիք
կը դառնայ և ժողովուրդը կը կե-
ղծուի անընդհատ մերթ մէկ կու-
սակցութեան, մերթ միւսէն: Այս
վիճակ շատ արգահատելի է, սա-
կայն դժբախտաբար շատ երկիր
ներու համար իրողութիւն է:

Գ. Գ.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Սիւլիկ, 99 մարտ

Ամէն անգամ որ, գրէս ձեռք առնու-
քաղաքիս մասին մի քանի ազգ գրելու,
ստիպուած եմ անպատճառ թաղա-
նի եւ հոգաբարձու գործերէն օրհնի:
Հոս այժմ թաղային բոլոր գործերը
գրեթէ կարգի մտած են եւ բարոյի
մոռցուած է նախորդ տարիներու ան-
կերպարան վիճակը: Ինչպէս ըսինք
Սիւլիկի ազգային գործող վիճակը ժը-
խիթարական է. նախորդ թաղականե-
րէ առկա մնացած մի քանի կնեւոտ
խնդիրներ բոլորովին կարգադրուած են,
եւ եթէ այսպէս շարունակէ հիւղեցող
պարտքերը ստորոջովին կը վճարուին:
Գովեստի արժանի է Պոտ. Թաղա-
խորհրդոյ Տիար Առնապետը, մը մեծ
հոանդ եւ անձնութիւն յայտ կու-
տայ: Շատ լաւ կըլլայ եթէ անգամ-
կիցներէ մի քանիս, իրենց անձնական
այլ եւ այլ գծուած հաշիւներ եւ հիւ
խնդիրներ մէկ կողմ ձգելով, իրենց ա-
տենապետին շուրջը բոլորուին ու ա-
նոր հետ միասին աշխատին եւ ամեն
բեռ ու յոգնութիւն մէկ հողի ուղի
վրայ չը ծանրաբեռնեն:

Կալով վարժարանին՝ Թաղական եւ
Հոգաբարձու ձեռք ձեռքի կաշխատին
իրենց պարտքի բարեկարգութեան հա-
յտաւղիւնութեանը համար: Ինչ որ Գ.
կ. առաջարկած էր հոգաբարձուներու
մասին, Սիւլիկիցիք երկու տարի առաջ
զայն գործադրութեան գրած եւ շատ օ-
գուտներ քաղած են: Փափաքելի է որ
այս գրութիւնը ընդհանրապէս բոլոր

Պուլկարահայոց մէջ:

Եթէ պաշտօնական մարմինք յան-
ցանք մը ունին, այն ալ սա է որ,
դպրոցական հանդէսներու ժամանակ
միայն միաբերին կիցայ վարժարանը
այցելել: Մնացեալ օրերու մէջ դպրոցին
սեմէն իսկ ներս ոտք չեն կոխեր: Ի-
րօք, վստահ ենք թէ՛ դպրոցական
պաշտօնէութիւնը կատարեալ խղճամը-
տութեամբ իր պաշտօնը կը կատարէ,
բայց պէտք չէ որ լքուած թողու յա-
ճանակի այցելութիւններով պէտք է
խրախուսել զայն:

Վարդանանց տօնի առթիւ հոս ալ
դպրոցական սրբուն հանգէս մը ունե-
ցանք: Ժողովրդեան խումբ բազմու-
թիւն մը ներկայ էր. հոն էին նաեւ
քաղաքի նորոնտի ուսուցիչները եւ
քաղաքացիներ իրենց ստորագրան պաշ-
տօնեաներով: Երկուսն ուսանողք աւուր
փառաշունքով երգեցին եւ արտասա-
նութիւններ ըրին: անոնց մին, արձակ
սաբան աշխարհաբառով մը բացատրեց
մեզ Վարդանանց պատերազմը եւ ա-
նոնց նպատակութիւնը: Նոյնպէս խօ-
սեցաւ վարժարանին ուսուցիչներէն
Թ. Համամեան, ի վեր հանեց Վարդա-
նի անձնութիւնը ու կատարած
գործի վստահութիւնն եւ բազմաթու-
թիւները: Երբ ազգին Ե. դարու եւ
այժմի ունեցած վիճակի նմանութեան
վրայ, Դպրոցական հանգէսէն հաք կա-
տարուեցաւ «Միամակալութեանց ընկ.»
ձեռագործներու վիճակահանութիւնը:
«Միամակալութեանց ընկ.» որ անցեալ
նոյնի այս ժամանակ մեծ եռանդով կը
գործէր: Երբ միայն անունը մնացած
է: Անդամակներէն շատերը, լո՛կ
պնձնական այլ եւ այլ խնդիրներու
պատճառաւ ինքզինքնին մէջ մէկ կողմ
քաշած են եւ երեսի վրայ ձգած աղջ-
կանց ձեռագործի դասը:

Այժմ հրապարակաւ կը խնդրենք աղ-
նուհի Տիկիններէն, որ «ըսի ըսաւ»-
ները մէկ կողմ ձգեն, եւ քիչ մը գո-
րծի փոխին: Դործ մը ստանձնել եւ մէկ
ստորի շարունակել ու յետոյ լքել ի-
րենց պատիւ չը բերեր:

Դիտող

Քաւրիզ 18/30 յետոյ

Հայկական խնդրոյ նկատարման
եւ բարենորոգման խնդրոյն ձեռք
պնդուելու անհրաժեշտութեանը
մասին անցեալ շաբթու կէս պաշ-
տօնական թան լրագրոյ առաջ-
նորդող յօդուածը անշուշտ կար-
գացած ու արտատպած լինելու
էք: Այդ յօդուածին պատճառաւ
թանի ճաճկաստան մուտքը ար-
գելուած է:

Կ. Պոլսէն ֆրանսացիներու եւ
կոծ նամակները Թուրքիոյ վիճա-
կը շատ շփոթ կը նկարագրեն,
ժողովուրդը ահ ու դողի մէջ է
կըսեն, լրտեսներու եւ գողտնի ու-
տիկաններու եւ նորանոր խտու-
թիւններու յաւելումներ եղեր են,
այնպէս որ լրտես մը երբ իմանայ
թէ մէկը «գործ չի կայ» եւ կամ
այս նախադասութեան իմաստը
չօշափող խօսք մը ըսէ, իսկոյն այդ
խօսողը ձերբակալելով 25 դա-
հեկան տուգանք կ'առնեն. բայց
այս 25ով չեն բաւականանար ըը-
նականաբար. զի հայ հռովմէական
մը այս պատրուակաւ ձերբակա-
լելով պահականոց տարած են եւ
պաշտօնական 25 դահեկան տու-
գանքը գանձելէ զատ սպառնա-

ցած են զինքը աւելի ծանր յան-
ցանքի զրպարտութեամբ մը ժուր-
նալ ընել. ուստի ձերբակալեալը
զինք մեծագոյն չարիքէ մը փր-
կելու համար կը ստիպուի զրպանին
մէջ ունեցած բոլոր գրամները (150
դահեկան) տալ եւ օձիքը ազատել:

Տիւրքիոյ հրապարակին վրայ քա-
նի մը օրէ ի վեր Օսմանեան ար-
ժիւթը ի վեր անկուս կը կրեն. նա-
խապէս կարծուեցաւ թէ պօրսայի
սրբաշնորհներու գործն է, բայց
անկուսին երկար տեւելը իրաց վի-
ճակին ծանրութեան կշիռը ի վեր
ածեց:

Քանի օրերէ ի վեր Լոնտոնի ու
Պէրլինի պօրաններու պաշտօնական
հեռագիրները Հայաստանի կացու-
թեան տակաւ սպառնացող երի-
ւոյթ մը առնելը Օսմանեան ար-
ժիւթը ի վեր անկուսին միակ եւ միակ
պատճառ ցոյց կուտան: Լոնտոնի
հրապարակը հանուր եւրոպական
հրապարակաց իշխող ըլլալով, Օսմ-
թիւթերու հոն անկուսը բոլորի
վրայ ազդած է:

Ժամանակէ մը ի վեր Օրմանեան
պատերազմի Դրան եւ Պալատին
միջեւ խիստ կարեւոր խնդրոց նը-
կատմամբ տեսութիւններ կը փո-
խանակուին ու բոլորովին զազանի
կը պօհուին. այս տեսութիւնք ոչ
թէ գրաւոր այլ բերանացի տեղի
կուենան: Այս բանակցութիւնք
որպէս թէ, սովորաւ գաւառներու
անտանելի վիճակին դարձան տա-
նելու ու պաշտօնապէս հանգանու-
կութեան ձեռնարկելու համար ուր-
տօնութիւն տրուելու հարցով կը
զբաղին. բայց իսկապէս բանակ-
ցութիւնը արեւ շատ աւելի կարե-
ւոր խնդրոյ մը շուրջը կը գտ-
նայ. այն է,

Թուրք կառավարութիւնը նա-
խատեսելով յառաջիկայ Ձէնընկե-
ցութեան դեպքանախորհուրդին
մէջ Թուրքիոյ եւ Հայոց մասին տե-
ղի ունենալիք խորհրդակցութիւն-
ներն, Օրմանեան պատերազմը հի-
մակուց ձեռք առած է եւ կը ջա-
նայ զանի հրահանգիլ. առկէ ան-
դին դիւրին է հասնել ինչ որ
կը լինին. զի ուրիշ մտնրամաս-
նութիւններ առ այժմ կը պակսին.
միայն սա ալ ճիշդ է թէ Սուլ-
թանը իր լրտեսներու միջոցաւ
տեղեկութիւն առեր է թէ դեւ-
պանտներէն մին վերջերս Օրման-
եանէ ուղեր եւ ստացեր է Հայաս-
տանի հայոց վիճակը պարզող ըն-
դարձակ տեղեկագիր մը, որուն
կցուել են նաեւ սովորաւ զաւառ-
ներէն վերջերս հասած պաշտօնա-
թիւթերէն կարեւոր մի մաս:

Պատերազմարանէն դեպքանա-
տան թուրքիւն տրուած ըլլալն
լրտեսներու միջոցաւ մինչեւ Սուլ-
թանի ակնշնչը կը հասնի, նա Օր-
մանեանը կ'անշուշտ սպառնալից
ստիպումներու տակ կը հարցնէ,
եւ Պատերազմը այդ լուրին ան-
հիմն եւ յերիւրուած ըլլալն կը
յայտարարէ. բայց Սուլթանը այդ
յայտարարութենէն բնաւ գոհ չի

մնալով, իր հանգստութիւնը կը
կարենցէ եւ կը ջանայ Օրմանեանը
ուղածին պէս կազմապարհել եւ ա-
նորմէ թուրք կառավարութեան
գահաւակութիւն յայտնող նոր
պաշտօնավթիւթեր առնել. բայց
այդ թիւթերը ինչ որ ալ լինին
պետութեանց առջեւ բոլորովին
կարեւորութեան զուրկ պիտի մնան:

Վերոգրեալ տեղեկութիւնները
Կ. Պոլսէն լաւատեղեակ օտար աղ-
բիւրէ առնելով Ձեզ կը հաղոր-
դեմ:

ԶԵՆՆԿԵՑՈՒԹԵԱՆ ԴԵՍՊԱՆԱԽՈՐՀՈՒՐԴԸ

Մարտ 14ին, Ժուռնալի քաղաքա-
կան տնօրէն Տ. Սէսիի հետ տեսակցու-
թեան մը մէջ, մեր տնօրէնը սա հար-
ցումը ըրաւ անոր. «Կը կարծէ՞ք որ
Ձէնընկեցութեան դեպքանախորհուրդը
որ Լահէի մէջ պիտի հաւաքուի մայիս
18ին, ուզէ զբաղիլ Ալլահ-Լոէնի եւ
Հայկական ու Մակեթոնական խնդիր-
ներով: Առանց այս խնդիրներուն մէկ
արդար լուծման իրական եւ ճշմարիտ
խաղաղութիւնը, որուն վրայ կը խօսի
կոմս Մուրադիէվի շրջաբերականը, ինձ
կարելի չի ելլի ոչ Արեւմուտքի, ոչ
Արեւելքի մէջ: Այս հարցը չափազանց
կը շահագործէ Թուրքիոյ հայերը եւ այս
մասին ձեր կարծիքը կը հարցնեմ, հա-
մարտը ըլլալով որ միջազգային դի-
ւանագիտութիւնը շատ գաղտնիք չու-
նի ձեզի համար»:

Ժպիտ մը փայլեցաւ Տ. Սէսիի պատ-
կառելի զէմքին վրայ. ան նոր վերա-
դարձած Աթէնքէ, ուր կը գտնուէր
թուրք եւ յոյն պատերազմին ժամանակ,
նշանաւոր յօդուածներ հրատարակած էր
ի նպատակ հիշեցական դասին եւ մի-
անգամայն չէր մոռցած երբեմն երբեմն
ձաղկել հայկական շարքերու հեղինակ-
ները: Տ. Սէսի մեզի պատասխանեց
հետեւեալ կերպով. «Նմ կրնար ձեզի
որոշ բան մը ըսել Ձէնընկեցութեան
դեպքանախորհուրդին մասին: Ըստ ա-
մին հաւանականութեան, պերճախօ-
սութեան ծաղկներով պիտի պսակեն
Ձէնընկեցութեան ծրագիրը եւ հրա-
ւիրանները իրարու հետ պիտի մրցին
գովաբանելու համայն Ռուսիոյ կայսեր
մեծանոցութիւնը: Բայց պիտի ուզե՞ն
կամ պիտի կրնան ազդու միջոցներ
ձեռք առնել գործադրելու համար ի-
րենց ծրագիրը: Այս տարակուսելի է
ըստ իս: Արեւելքը խաղաղեցնելու հա-
մար Եւրոպա պարտի ստիպել Սուլթա-
նը բարենորոգումներ իրականացնելու
Հայաստանի եւ Մակեթոնիոյ մէջ. եթէ
Սուլթանը չը յօժարի այս ընել, պիտի
ուզե՞ն Թուրքիա բանակ մը զրկել եւ
ինչ կերպով: Հայկական կոտորածնե-
րուն ժամանակ, որոց առաջ գալուն
Անգլիոյ նպատակց յեղափոխականները
քաջալերելով իր Եգիպտական քաղա-
քականութեան պէտքերուն համար,
քանի մը տէրութիւններ ուղեցին ի-
րապէս միջամտել, բայց այդ մասին ի-
րենց արդիւք եղաւ իրենց արեւելեան
շահերու հակառակութիւնը: Դեպքանա-
խորհուրդը պիտի յաջողի՞ այս շահերու
բնոյթը փոխել, այս անկարելի չէ, սա-
կայն ամէն պարագայի մէջ քիչ հաւանա-
կան է: Այսպէս է նաեւ Ալլահ-Լոէնի
խնդրոյն համար: Ենթադրեմք թէ
Դեպքանախորհուրդը որոշէ այս նա-
հանգիստուն ժողովուրդին կամքը հար-
ցնել եւ Ալլահ-Լոէնցիներու մեծա-

մասնութիւնը փափագի վերստին միա-
նայ Ֆրանսայի հետ, ինչ պիտի ընեն
աւերութիւնները, եթէ Գերմանիա չը
համակերպի իրենց որոշումներուն: Պա-
տերազմ պիտի հրատարակեն իրեն զէմ
եւ ինչ կերպով: Պալով սպառնալիցու-
թիւնները առաքեալաբար նուազեցնե-
լու խնդրոյն, ո՞վ պիտի ըլլայ ատոր
նախաձեռնարկը: Ո՞վ գաւառուր պիտի
ըլլայ իւրաքանչիւր տէրութեան՝ յան-
ձըն առած պարտականութեանց ճշդ
գործադրութեան մասին: Ի՞նչ կարծիքով
հոս են անա դժուարութիւնները: Սա-
կայն անկարելի չէ որ դեպքանախօ-
հուրդը ընտրէ իրաւախօսութեան մը-
նայուն յանձնախումբ մը, որ պէտքի
տէրութիւնները անոր գիմեն՝ իրենց
մէջ ծագած խնդիրները զէնքով լուծել
որոշելէ առաջ»:

Կը խոստովանինք որ մենք մեր բա-
րիկեան նշանաւոր պաշտօնակցէն նը-
ւազ սկեպտիկ ենք: Ձեռք կարծեր որ
աշխարհի ամենէն հեռու որ տեղերէն
հեռւ բարձր արժանիքի տէր մարդիկ
բաւականան պերճախօսութեան մար-
գաբաններ թափելով իրենց բերնէն եւ
իրենց տեղերը վերադառնան ուսանց
ղջալի քայլ մը առնելու այն շատ զին
մէջ գործու սօցնստական վիճակաւ
գտնց: Նիքօրա Բ. ի ուզածը պերճախօ-
սութեան ծաղկները չեն, այլ ընդազ-
գային վիճաբանութիւն մը. քաղաքա-
վարական ձեւերու փոխանակութիւն
մը չէ անոր փափագը, այլ կարծիքնե-
րու փոխանակութիւն մը «արդարու-
թեան եւ իրաւունքի սկզբունքներուն
համար յայն նուիրադրութեանը հա-
մար»:

Դեպքանախորհուրդին խորհր-
դակցութեան միջոցին, անկարելի չէ
որ Ձուրցիւրիոյ կամ Ամերիկայի պէս
ազատ երկրի մը ներկայացուցիչը խօսք
առնէ եւ ըսէ.
«Շնորհակալութիւնս կը յայտնեմ
Ձարին իր ազնիւ նախաձեռնութեան
համար, բայց չեմ կրնար գոհանալ ա-
նիրական բաներով: Եթէ մինչեւ հոս
զաւու յօդուածները յանձն առինք,
պէտք է որ լուրջ գործ մը տեսնենք:
Եթէ նոյն իսկ որոշենք որ իւրաքան-
չիւր պետութիւն իր վիճակներուն
կէսը արձակէ, հիմնական դարման մը
տարած չենք ըլլար չարիքի մը որ կը
սպառէ բոլոր ժողովուրդներու ուժե-
րը: Թէ ցամաքային եւ թէ ծովային
սպառնալիցութեան տեսակէտով, իրաց
վիճակը պիտի մնայ ինչպէս էր առաջ:
Փաշլուքի ունենանք չարիքին ար-
մատը խելու: Կարգադրենք Ալլահ-
Լոէնի խնդիրը ու պիտի տեսնենք որ
Գերմանիա, Ֆրանսա եւ իրենց դաշ-
նակիցները անմիջապէս իբր հրաշքով
մը պիտի նուազեն իրենց ծովային
եւ ցամաքային ուժերը: Կարգադրենք
հայ եւ մակեթոնական խնդիրը ու Ռու-
սիա, Աւստրիա ու Պալքանեան պետու-
թիւնները անմիջապէս իրենց ճանակ-
ներուն ստուեր մասը պիտի ձածրեն:
Այս երկու խնդիրներն են միայն բ-
րոնք իրապէս կոպառնան եւրոպական
խաղաղութեան. մէկ հարուածով բառ-
նանք այդ խնդիրները, եթէ հարկ ըլ-
լայ, նոյն իսկ մեր միացեալ սուրբով
եւ այն առեւ միայն Եւրոպայի եւ թե-
րեւս բոլոր աշխարհի համար իրական
եւ տեսական խաղաղութիւնը ապահո-
ված պիտի ըլլանք»:

Եւ անկարելի չէ որ ստանկ լեզու մը արամարտութե-
նը յափշտակէ միաբերը:
Հայերու համար յուսոյ նշոյլ մը կայ
ուրեմն Ձէնընկեցութեան դեպքանա-
խորհուրդին մէջ, այս պատճառաւ վեց
ամիս առաջ կը գրէինք այս սիրական-
րուն մէջ. «Կիր դեպքանախորհուրդի
հաւաքման ժամանակը որոշուի, էջ-
միածնի կաթողիկոսին պարտականու-
թիւնն է զիմեւ Ձարին, աշխուրթեանց

խորհրդակցութեան ենթարկել տալու համար Թուրքիոյ հայերուն վիճակը: Նոյնպէս բոլոր հայ գաղթականութեանց պարտականութիւնը պիտի ըլլայ զիստ պանախորհուրդի նախագահին հանրապետիկ ուղղել ի նպաստ իրենց Թուրքիոյ հայրենակիցներուն:»

Այս կրկին հրաւերը լսելի չեղաւ բացի Պաշկարիայէ, որովհետեւ այսօր չունինք Ներսէս Վարժապետեան մը, ոչ ալ 1878ի հայրենասէրները: Եւ այսօր ալ զարձեւալ անմահ Պատրիարքին քարոտւղարն է որ ազգային պաշտաւ մունքին հաւատարիմ մնացած հայերէ քաջախիւրած, Լահէի դեսպանատնի հուրդին պիտի երթայ յիշեցնելու համար ահաբեկեանց թէ հայկական խընդիր մը կայ եւ թէ ան իր լուծմանը կը սպասէ տակաւին:

Լ՝ Առնէնի

ՀԱՆՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Աղէքսանդրիոյ ազգայինք 500 ստորագրութեամբ հանրագրութիւն մը զրկած են Եգիպտոսի Առաջն. Տեղապահին. եւ այդ հանրագրութեան պատճէնը հրատարակութեան համար մեզ զրկուած է որ հետեւեալն է.

Գեր. Տ. Յակոբ Ս. Եպիսկոպոս Ստ. Նախագահ Պատկ. Երես. Վիսաւնական ժողովոյ

Ի Ֆանիոյ

Գեր. Նախագահ սրազան հայր Կ. Պաշտոյ ազգային լրագրաց մէջ հրատարակուած լուրերէ կը տեղեկանանք թէ Պատրիարքութեան Գահիրէի Քաղաքական ժողովին խնդրանքով առաջնորդական նորոգ ընտրութեան հրահանգ զըրկեր է տեղւոյդ Առաջնորդարանին, եւ ի մօտոյ երեսփոխանական ժողովը ի նիստ պիտի գումարուի եւ զեր այդ խնդիրը նկատողութեան առնելու:

Ըստ որում Գաւառական երեսփոխանական ժողովին մէջ Աղէքսանդրիոյ ստորագրութիւն հայ հասարակութիւնը ներկայացուցիչ չունի, ստորագրեալ Աղէքսանդրութեան ազգայինքս կուգանք մեր տեսութիւնները պարզել Եգիպտոսի առաջնորդական ընտրութեան մասին:

Յայտնի է թէ անցեալ տարի Գաւառական երեսփոխանական ժողովը քուէից միտձայնութեամբ, վիճակիս առաջնորդ ընտրեց Ամենապատիւ Իզմիլիեան Սրբազանը. թէ եւ այս ընտրութեան մէջ Աղէքսանդրիոյ հայ հասարակութեան պաշտօնական մարմնոյն պաշտօնապէս հրաւեր չէր ուղղուած եւ սակայն Պատ. Թադ. խորհուրդը բողոքելով հանդերձ այս գնացաւ թեան դէմ, բացառապէս համակերպեալ կատարուած ընտրութեան, նկատի առնելով ընտրելոյն բացառիկ արժանիքը եւ վոյելած ժողովրդականութիւնը:

Եւ սակայն ցաւալի է տեսնել որ տեղւոյդ Քաղաքական ժողովը, առանց նկատողութեան առնելու անցելոյն մէջ կատարուած օրինաւանցութեանց դէմ Աղէքսանդրիոյ լէն քանիցս տեղացող բողոքներն

ու գանգառները, վերջերս դարձեալ ինքնաբերաբար Պատրիարքութեան գիտմանը ըրեր է այնպիսի խնդրոյ մը համար որ իր ընդհանուր հանգամանքովը այդ ժողովին ձեռնհասութեան վեր է. ալ կը պատկանի երեսփոխանական ժողովի իրաւասութեան, պայմանաւ որ այն վերջինն ալ իր ընդհանուր Գաւառական երեսփոխանական ժողովի տիպոսը կարենալ արդարացիելու համար իր մէջ ունենայ Աղէքսանդրիոյ պաշտօնական ձայնը:

Այս պարագաներուն տակ Քաղաքական ժողովի կողմէ Պատրիարքութեան նորոգ ընտրութեան հրահանգ խնդրոյնը ապօրինաւոր եւ այս ապօրէն գիտման վրայ Պատրիարքարանէն յղուած հրահանգն ալ ինքնին անվաւեր է եւ հետեւաբար չը կրնար երեսփոխանական ժողովոյ օրակարգը անցնիլ:

Հիմա դառնանք բուն խնդրոյն: Երբ վիճակի մը առաջնորդական ընտրութեան տեղեկագիրը Պատրիարքարան կը զրկուի, այս վերջինը պարտաւոր է խառն ժողովի ընտրութեան ենթարկել զայն որնոր երբ կը տեսնէ թէ ընտրական գործողութեանց մէջ ապօրինաւորութիւն մը չկայ, ընտրութիւնը կը վաւերացնէ եւ Պատրիարքի պաշտօն կը յանձնէ քաղ. իրիւր մը տեղեկագիր Բ. Գրան. ըստ առաջնորդութեան մինչեւ հիմա կատարուած բոլոր առաջնորդական ընտրութիւնները այս կանոնին ենթարկուած են, ցաւալի է որ մի միայն Եգիպտոսի առաջնորդական ընտրութեան մէջ Պատրիարքարանը տարբեր կերպով վարուեցաւ. փոխանակ ըստ ընկալեալ սովորութեան ընտրութիւնը վաւերացնելու, կարգ մը ուղղակի գիտմանը ըրաւ:

Ասիկա ինքնին անմատչեալ քեան ցոյց մըն էր Պատրիարքութեան կողմէ հանգէպ իզմիլիեան Սրբազանի եւ անկերու էր որ բարձրագոյն իշխանութիւնն ալ այդ օրինակ հանգամանքներու տակ պիտի հետեւէր Պատրիարքարանի բռնած քաղաքականութեան:

Ուրեմն Պատրիարքարանը օրինաւոր ճամբէն մոյրելէն եւ իր մոլորմամբ Բարձ. իշխանութեան վարանումներու պատճառ դառնալէ վերջ, կառավարիչ մեզի ընտրութիւնը բեկանել եւ նոր ընտրութեան ձեռնարկել: Եթէ Եգիպտոսի հայերը Պատրիարքարանի այս քմաւաճ տնօրինութեան գըրուի ձեռն, օրինակը վարակիլ պիտի ըլլայ, ուրիշ գաւառներու համար ալ: Երբ ընտրուող եկեղեցական մը ո'ւ է պատճառաւ Պատրիարքարանի տհաճելի թուելու ըլլայ, բաւական է օրինական տրամադրութիւնները գնաց ընել եւ գրիլ ընտրող շրջանակին թէ բարձրագոյն իշխանութիւնը դժուարութիւններ կը յարուցանէ իշխ.

եալին դէմ եւ այս կերպով այդ եկեղեցականը Բ. Գրան առջեւ կուսկանջելի ցոյց տալ եւ ընտրող շրջանակն ալ մեղսակից ընել այդ արարքին:

Եգիպտոսի Հայութիւնը համակերպելով Պատրիարքարանի այդ ապօրինաւորութեան մեծ հարուած մը տուած պիտի ըլլայ Աղգ. Սահմանադրութեան սրտ դէմ արդէն թակարդ կը լարուի այս օրերս անխիղճ ձեռքերու կողմէ: Մեր համարումը այն է որ Եգիպտոսի հայութիւնը գնահատելի ծառայութիւն մը մատուցած կըլլայ՝ առկա վիճակի մէջ թողով Եգիպտոսի առաջնորդական խնդիրը:

Հետեւաբար նախ կուգանք բողոքել տեղւոյդ Քաղ. ժողովին կողմէ Պատրիարքարան եղած ապօրինաւոր գիտման դէմ:

Երկրորդ իբր Աղէքսանդրաբնակ ազգայիններ կը փափագին որ նոր ընտրութիւն չը կատարուի եւ ժամանակի մը համար առաջնորդական խնդիրը առկա մնայ, իզմիլիեան Սրբազանը իբրեւ ընդհ. Եգիպտոսի Առաջնորդ:

Երրորդ, կը խնդրուի Գահիրէի Պատ. Երեսփոխաններէն որ առանց երկրորդական նկատումներու եւ ազգեցութիւններու սոյն կարեւոր խնդիրը ազատ մնայ, խորունկ համոզումով դատեն, ու ըստ այնմ որոշուի տան:

Ո'ւ է ձախող որոշման հանգէպ մենք մեր խղճի ձայնին անսալով, բողոքող պիտի մնանք:

Վերջապէս կուգանք Զոր Գերագործութիւնէն խնդրել որ իրեւ առանգապէս Աղգ. եկեղեցական իրաւանց, հաճիք Զոր նուիրական պարտականութիւնը անյողող կատարել, որպէս վայելէ պարտաճանաչ եկեղեցականի մը եւ քաջարի հովուի մը:

Կը խնդրենք որ ներկայիս Ընդհանուր ժողովի սեղանին վրայ դնել բարեհաճիք եւ մատչելով ի համբոյր Ս. Ալայդ, մնամք ասինտիւրին յարգանքով:

(500 ստորագրողներ)

ԻՐԱՆԻՆԻՔ

— — —

Իլլոյ կիմանանք թէ Պատրիարքարանի որոշման հակառակ Շումլայի ազգայինք Տր. Արսէն Վ. Վեհապետին հիւրասիրել կը դժկամակին եւ այս տուիւ ալ Պատրիարքարանի գրած են թէ վեհապետին Շումլա չի գայ:

Այս մասին Շումլացիներու դժկամակութեան պատճառը, կը կարծենք թէ տեղի, նոր ծախքերու դուռ բանալ չ'ուղղուիլ է քան թէ վարդապետին դէմ մասնաւոր հակառակութիւն մը տալ:

Ըստ միւր ալ Շումլայի ազգայինք իրաւունք ունին տնտեսագիտորէն վարուելու, որովհետեւ

այդ փոքր գաղթականութիւնը իր կարողութենէն շատ վեր ծախքերու ենթակայ է: Շումլան 170-180 տուն հայ գաղթականութիւն մը կը պարունակէ իր մէջ, որոնք մեծագոյն մասամբ նիւթական ան. նախանձելի վիճակ մը ունին, եւ ասով միատեղ արդէն եկեղեցւոյ եւ ողջ վարժարանաց համար 10-12 պաշտօնեաներ կը պահեն, հետեւաբար Շումլայէն ասկէ աւելին սպասելը անկարելին պահանջել է:

— Ռուսնուցի Աղգ. վարժարանին մէջ աշակերտի մը իր ընկերը վիրաւորած ըլլալն մեր նախորդ թիւով գրած էինք: Այժմ կիմանանք թէ այդ դէպքը տեղի ունեցեր է չնչին պատճառով մը, Յարութիւն Մինասեան եւ Մկրտտիչ Կիւմիւշեան անուն երկու աշակերտներու միջեւ. այս վերջինը իր ընկերը վիրաւորած է զմիւրով մը. Յարութիւն երեք վէրք ստացած է, մին բաղուկէն, մին ձեռքէն, իսկ միւսը ազգրէն. վիրաւորը կը դարմանուի եւ վէրքերը բուժելի են:

— Ռուսնուքէն չորս երիտասարդներու ստորագրութեամբ գրութիւն մը եկած է մեզ հրատարակութեան համար. մենք յարմար դատեցինք համառոտութիւնը միայն ընել հոս:

Այս երիտասարդներ բողոքելով Ռուսնուքի Նաղարեկեան մասնաճիւղի երկու շրջաբերականներուն դէմ՝ կրսնի «ի՛նչ է ձեր նպատակը, Ձէյթունը նպատակ զրկել է՝ կամ թէ ըլլալիք նպատակ զեղծուէ փրկել կուզէք. եթէ առաջինն է, բնականապէս շատ պարսաւելի է ձեր ընթացք, իսկ եթէ ըլլալիք նպատակ զեղծուէ ապա տեղ կուզէք, ի՛նչ հարկ կար հայհոյելու, ինչո՞ւ որոշապէս մատնանիլ չէ՞ք ընել այդ նպատակ հաւաքելու ու զրկելու մասին առաջարկուած միջոցներուն ըստ ձեզ կասկածելի եղած կէտերը, եւ ինչո՞ւ ցոյց չէք տար ուրիշ լաւագոյն եւ ապահով եղանակ մը ու կերպ մը որով անվտանգ հասնի մեր սովորածն եղբայրներուն հացապիւնը»:

— Կը տեղեկանանք թէ՝ յառաջիկայ չորեքշաբթի գիշեր (մարտ 31) քաղաքիս «Հայկական Կրթութեան» ի նպատակ տնտեսական ներկայացում մը պիտի տրուի Անկէ Սլաւօֆի սրահին մէջ. ներկայացուելիք տրամնէ վ. Հիւկօի Սլաւօ Սլաւիքիերի՝ որ խնամօք պատրաստուած է, եւ մէկ ծիծաղաշար իրաւակերպութիւն:

ՎԱՀԱՆ ԶԱՐԻՄՍԵՆ

Մենք ձեզ չէինք ըսած թէ հայհոյել չէք զիսեր. ձեր այդ մասնագիտութեան վրայ հաւատք ունէինք. ձեր անկարգիւ ըլլալու մասին Իրաւունքի 20 թիւով մէջ բերուած ճշմարտութիւնները երկու բառով «սուտ է» ըսել զանոնք հերքած ըլլալ չը նշանակիր. իսկ այն անպատկառ հայհոյութիւնները զոր թափած էք, ձեր սեւ ողբոյն խոպան պատկերը կը ներկայացնեն:

